ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՍԾ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 07-ին կնքված NՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՍԾ-18/1.1 պայմանագրում 2018 թվականի նոյեմբերի 09-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ են եկել որոշակի խնդիրներ, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված N2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացվել է 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

07.05.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՍՇ-18/1.1 պայմանագրի

Ք. Երևան <<03>> նոյեմբերի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՌՎԱ-ԵՐԿԻՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ավետիսյանի, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 07.05.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՍՇ-18/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 08.12.2018թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011019776 ՀՎՀՀ 02631263 (ստորագրություն) Կ.Տ	«ԱՌՎԱ-ԵՐԿԻՐ» ՍՊԸ Նոր Հաճն, Թումանյան 72 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 1150000285100100 ՀՎՀՀ 03524428 էլ. հասցեն՝ arvaerkir@gmail.com հեռ. 094 70 61 64 (ստորագրություն) Կ.Տ